

սէս իւր ասպազայ մեծութեան հիմը. ինչպէս միջնաբերդի մէջ ասպահոյտուած՝ վառեց հողեւոր եւ իմացական զէնքերով նոր թիւ մը զինուորներու եւ յեց անոնց դործեց ասպատակ զէսի մեծ աշխարհ՝ կողոպտելու մարդկան սրտերը, գերելու զանոնք խաչի դրօշին տակ: Թիկունքը տուած Մեծ Անապատին, կուրծքը հակայարձակումներու, պահեց դիրքն անշարժ. ի վերջոյ թշնամին էր, որ զէնընկէց անձնատուր եղաւ իր առաջ:

Այս կրուին մէջ իրեն պաշտպան գտաւ Մովսէս յանձին Մելիք Հայկազնի, եւ ոահվիրայ օգնական յանձին Պօղոս վարդապետին: Մովսէս եւ Պօղոս վարդապետներու մէջ կնքուած համերաշխութիւնը արդիւնաւոր բաւ անոնց վաստակը, սիրելի ընծայեց անոնց անունը ժողովրդեան, մասնաւորապէս Նոր-Ջուղայեցիներուն, որոնք թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս նպաստամատոյց եղան անոնց ազգօգուտ ձեռնարկութիւններուն: Այս պատճառաւ ալ կարելոր կը համարիմ կից Մեծ Անապատի պատմութեան երեւան բերել նաեւ այս երկու զէմքերը:

Առաքել Դաւրիթեցի խօսելով ժի. դարու առաջին քառորդի հայ մշակոյթի մասին «Ոչ դոյր, կը գրէ, ի ժամանակին յայնմիկ անպատ եւ կամ գիտող կարգաց կրօնաւորական վարուց, վասն բարում հինից թշնամեաց եկելոց ի վերայ եւ վրդովմանց եւ աւերակաց աշխարհիս Հայոց: ամենեւին բնաջինջ եղեալ էր եւ բարձեալ նշոյլ եւ նշմարան առաքինի